ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի շնորհավորական ուղերձը՝
Սահմանադրության օրվա առթիվ

Հարգելի՛ հայրենակիցներ, շնորհավորում եմ բոլորիս՝ Սահմանադրության օրվա առթիվ :

Հուլիսի 5-ին նշվող այս տոնը կարեւոր ու պատմական օր է մեր երկրի ու ժողովրդի կյանքում: Սահմանադրության ընդունումն ու պահպանումը ցանկացած ժողովրդի ու պետության համար կարևորագույն նշանակություն ունի, այն երկրի բնականոն զարգացման ու ներքին խաղաղության, ժողովրդավարության ու համերաշխության խորհրդանիշն է:

Մեր երկրի Մայր օրենքը մեր երկրի հետագա առաջընթացի հիմքն է ու հենարանը: Այն արտահայտում է մեր ժողովրդի ընտրած ուղին, ազատ, ժողովրդավարական հասարակություն և սոցիալական ու իրավական պետություն կառուցելու նրա հավատամքն ու հաստատակամությունը:

Սրտանց շնորհավորելով Սահմանադրության օրվա առթիվ, մաղթում եմ խաղաղ ու բարեկեցիկ կյանք մեր ժողովրդին ու ամրություն՝ երկրի սահմաններին: